ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻՆ

ԵՎ ԱՅԼ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ПИЩЕВОЙ И ТАБАЧНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ, ТОРГОВЛИ, УСЛУГ И СМЕЖНЫХ ОТРАСЛЕЙ
НОВОПРОФ

ՎԵՐՆԱԳԻՐ

ԲԱՐԵՎ ՁԵԶ 3

ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆ 5

ԳՐԱՆՑՎԵԼ 8

ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ: ԱՐՏՈՆԱԳԻՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՅՆ ՍՏԱՆԱԼ 12

ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՀԵՏ 21

ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ 27

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ 36

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ 41

ԵԹԵ ՄՆԱՑԵԼ ԵՔ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ 45

ԵԹԵ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՁԵԶ ՀԵՏ ԳԱԼԻՍ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ 47

ՇՓՈՒՄՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԱՇԽԱՏԱԿՑՆԵՐԻ ՀԵՏ 50

ՄՈՒՏՔԻ ԱՐԳԵԼՔ 53

Բարեվ Ձեզ

Եթե Դուք աշխատելու նպատակով եկել եք Ռուսաստան Ադրբեջանից, Մոլդովայից, Տաջիկիստանից, Ուզբեկստանից և Ուկրաինայից, ապա այս գրքույկները Ձեզ համար են: Նրանք նաև պետք կգան նրանց, ովքեր եկել են Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից և Հայաստանից, միայն այն տարբերությամբ, որ այդ չորս երկրների քաղաքացիներին արտոնագրեր պետք չեն:

Ինչպե՞ս օրինական կերպով ընդունվել աշխատանքի Ռուսաստանում: Ինչպիսի՞ աշխատանքային իրավունքներ ունեն օտարերկրյա աշխատողները: Ինչպես անել, որպեսզի չդառնալ միգրացիոն օրենսդրության խախտող: Ինչպե՞ս չդառնալ խարդախության զոհ, երբ Դուք ընդունվում եք աշխատանքի: Ինչպիսի՞ քայլեր ձեռնարկել, եթե նման իրավճակում այնուամենայնիվ հայտնվել եք և պարզվել է, որ Ձեր գործատուն կամ «բրիգադիրը» խաբեբա է: Ո՞վ կօգնի բարդ իրավիճակում:

Այս բոլոր հարցերի պատասխանները կգտնեք մեր գրքույկներում:

Դրանք Ձեզ համար կազմել են իրավաբանները, իրավապաշտպանները և արհմիությունները: Մենք հավաքագրել ենք այն ամենը, ինչ իմացել ենք. ուսումնասիրել օրենսդրությունը. գործնականում օգնել աշխատանքային միգրանտներին ու փորձել շարադրել այն պարզ լեզվով :

Հույս ունենք, որ մեր աշխատանքը Ձեզ համար օգտակար կլինի:

Վերջին էջերին մենք ձեզ համար գրել ենք մեր հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստը և հասցեները: Դուք միշտ կարող եք դիմել մեր կազմակերպություններին, և մենք կփորձենք օգնել Ձեզ: Մեր կազմակերպություններում խորհրդատվությունն անվճար է:

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԵՎՈՐ Է. Ռուսաստանի օրենսդրությունն անընդհատ փոփոխվում է: Հնարավոր է, մինչ գրվում էր այս տեքստը, ինչ-որ նորմեր արդեն կորցրած լինեն իրենց ուժը, իսկ մյուսները՝ ընդունված: Այդ պատճառով մենք խորհուրդ ենք տալիս բոլոր նրանց, ովքեր մեկնում են Ռուսաստան աշխատելու, նախապես դիմել խորհրդակցելու իրենց երկրի արհմիություններ, դեսպանատուն, ԱԳՆ բաժինների կամ այն կազմակերպություններ, որոնք աջակցում են աշխատանքի տեղավորման հարցում:

ОБРАЗЕЦ ЗАПОЛНЕННОЙ МИГРАЦИОННОЙ КАРТЫ

"А" (Въезд/Arrival)

Республика Беларусь
Republic of Belarus

Российская Федерация
Russian Federation

Миграционная карта
Migration Card

Серия/Serial: **РБ**
№

Фамилия/Surname (Family name): С Е Р Г Е Е В А
Имя/Given name(s): Н И Н А
Отчество/Patronymic: В И К Т О Р О В Н А

Дата рождения/Date of birth: День/Day 3 1; Месяц/Month 0 5; Год/Year 1 9 5 7

Пол/Sex: Муж./Male [ ] Жен./Female [X]

Гражданство/Nationality: УКРАИНА

Документ, удостоверяющий личность/Passport or other ID: 2 0 4 3 0 3 5

Номер визы/Visa number: —

Цель визита (нужное подчеркнуть) / Purpose of travel (to be underlined): Служебный/Official, Туризм/Tourism, Коммерческий/Business, Учёба/Education, Работа/Employment, Частный/Private, Транзит/Transit

Сведения о приглашающей стороне (наименование юридического лица, фамилия, имя (отчество) физического лица), населенный пункт / Name of host person or company, locality:
ОДО "Моя радость"
г. Минск

Срок пребывания/Duration of stay:
С/From: *01-01-2007* До/To: *14-01-2007*

Подпись/Signature: *Сергеева*

Служебные отметки/For official use only

Въезд в Республику Беларусь/Российскую Федерацию / Date of arrival in the Republic of Belarus/Russian Federation

Выезд из Республики Беларусь/Российской Федерации / Date of departure from the Republic of Belarus/Russian Federation

"Б" (Выезд/Departure)

Республика Беларусь
Republic of Belarus

Российская Федерация
Russian Federation

Миграционная карта
Migration Card

Серия/Serial: **РБ**
№

Фамилия/Surname (Family name): С Е Р Г Е Е В А
Имя/Given name(s): Н И Н А
Отчество/Patronymic: В И К Т О Р О В Н А

Дата рождения/Date of birth: День/Day 3 1; Месяц/Month 0 5; Год/Year 1 9 5 7

Пол/Sex: Муж./Male [ ] Жен./Female [X]

Гражданство/Nationality: УКРАИНА

Документ, удостоверяющий личность/Passport or other ID: 2 0 4 3 0 3 5

Номер визы/Visa number: —

Цель визита (нужное подчеркнуть) / Purpose of travel (to be underlined): Служебный/Official, Туризм/Tourism, Коммерческий/Business, Учёба/Education, Работа/Employment, Частный/Private, Транзит/Transit

Сведения о приглашающей стороне (наименование юридического лица, фамилия, имя (отчество) физического лица), населенный пункт / Name of host person or company, locality:
ОДО "Моя радость"
г. Минск

Срок пребывания/Duration of stay:
С/From: *01-01-2007* До/To: *14-01-2007*

Подпись/Signature: *Сергеева*

Служебные отметки/For official use only

Въезд в Республику Беларусь/Российскую Федерацию / Date of arrival in the Republic of Belarus/Russian Federation

Выезд из Республики Беларусь/Российской Федерации / Date of departure from the Republic of Belarus/Russian Federation

Образец заполнения

ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսաստան մուտք գործելիս շատ կարևոր է ճիշտ ձևակերպել միգրացիոն քարտը: Դա պարզ հարցերով փոքր փաստաթուղթ է, որոնց պետք է պատասխանել: Այն անպայման Ձեզ կտան, անկախ նրանից, թե ինչպես եք հատել սահմանը. ավտոբուսում այն կտա վարորդը, գնացքում՝ ուղեկցորդը, ինքնաթիռում՝ բորտուղեկցողուհին. եթե դա տեղի չի ունեցել, կամ Դուք մեքենայով եք, ապա քարտը Ձեզ կտրվի հենց սահմանին:

ԿԱՐԵՎՈՐ Է. Միգրացիոն քարտը տրամադրվում է անվճար:

Լրացնել միգրացիոն քարտը կարելի է ռուսերեն կամ լատիներեն տառերով:

ԻՆՉՊԻՍԻ՞ ՀԱՐՑԵՐ ԿԼԻՆԵՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՐՏՈՒՄ

Անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ: Միգրացիոն քարտում պետք է նաև նշել, թե Ռուսաստանում ում մոտ եք գնում («տեղեկություն հրավիրող կողմի մասին» սյունակը): Դա կարող է լինել ազգականի կամ ծանոթի անունը և հասցեն, կամ հյուրանոցի անվանումը և հասցեն, կամ էլ այն ընկերության անվանումն ու հասցեն, որտեղ Դուք պատրաստվում են աշխատել:

ԿԱՐԵՎՈՐ Է. Եթե Դուք մեկնում եք Ռուսաստան աշխատելու, ապա «Ժամանման նպատակը» սյունակում պետք է անպայման նշել «Աշխատանք»: Եթե Դուք նշեք ուրիշ նպատակ, ապա Դուք արտոնագիր չեք ստանա:

Միգրացիոն քարտը բաղկացած է երկու մասից՝ «Ա» և «Բ»: Պետք է ուշադիր լրացնել այդ երկու մասերը: Սահմանին միգրացիոն քարտի «Ա» մասը մնում է սահմանային անցակետի աշխատակիցների մոտ, «Բ» մասը վերադարձնում է Ձեզ: Նշենք, որ միգրացիոն քարտի «Բ» մասի հակառակ կողմում սահմանային անցակետի աշխատակիցները պետք է դնեն նիշ (դրոշմակնիք) Ձեր Ռուսաստան մուտք գործելու մասին:

ԿԱՐԵՎՈՐ Է. Շատ կարևոր է ճիշտ լրացնել միգրացիոն քարտը, ստանալ դրոշմակնիք մուտքի վերաբերյալ և անպայման այն պահպանել:

Եթե Դուք վնասեք կամ կորցնեք միգրացիոն քարտը, ապա առաջին 3 օրերի ընթացքում անպայման դիմում ներկայացրեք Ռուսաստանի ներքին գործերի նախարարության Միգրացիայի հարցերով գլխավոր վարչության (ГУВМ МВД) մոտակա մարմին այն քաղաքում կամ գյուղում, որտեղ գտնվում եք: Ներկայացրեք անձնագիրը և այն տոմսը, որով մուտք եք գործել Ռուսաստան, և Ձեզ անվճար կտրվի միգրացիոն քարտի կրկնօրինակը:

ԽՈՐՀՈՒՐԴ

ՆԳՆ-ն ունի ինտերնետային կայք. https://мвд.рф/: Օրինակ, այստեղ կան ՆԳՆ բոլոր ստորաբաժանումների ինտերակտիվ քարտեզը (այդ թվում՝ միգրացիայի հարցերով զբաղվող), նրանց հասցեներն ու կոնտակտային տվյալները:

ԿԱՐԵՎՈՐ Է. Միգրացոիոն քարտի կրկնօրինակը տրվում է անվճար:

ԿԱՐԵՎՈՐ Է. Մուտք գործելով Ռուսատան՝ պահպանեք այն տոմսը որով ժամանել եք: Այն կարող է հետագայում անհրաժեշտ լինի:

ԱՅՍՊԻՍՈՎ

ԱՅՍՊԻՍՈՎ.

- Սահմանին ստացե՛ք միգրացիոն քարտ և ճիշտ լրացրեք երկու մասերը:
- Համոզվե՛ք, որ միգրացիոն քարտի Ձեր հատվածում կա մուտքի դրոշմակնիքը:
- Պահե՛ք քարտը մինչև Ռուսաստանից մեկնելը:
- Պահե՛ք այն տոմսը, որով ժամանել եք Ռուսաստան:
- Միգրացիոն քարտը և դրա կրկնօրինակը տրվում են անվճար:

ԳՐԱՆՑՎԵԼ

Ռուսաստանի տարածքում օրինական գտնվելու համար առաջին հերթին անհրաժեշտ է **ձև ակերպել ժամանակավոր գրանցում** (այս փաստաթղթի պաշտոնական անվանումը շատ ավելի երկար է՝ «ծանուցում օտարերկրյա քաղաքացու գտնվելու վայր ժամանման մասին»):

Դա պետք է արվի 7 **աշխատանքային օրվա ընթացքում** սկսած այն պահից, երբ Դուք մուտք եք գործել Ռուսաստան: Տաջիկստանի քաղաքացիները կարող են գրանցվել 15 օրվա ընթացքում: Ղազախստանի, Ղրղզստանի, Հայաստանի քաղաքացիները, որոնք նախատեսում են աշխատել, կարող են Ռուսաստանում առանց գրանցման գտնվել 30 օր, իսկ Ուկրաինայի և Բելառուսի քաղաքացիները՝ 90 օր:

ԱՌԿԱ Է ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԲԵՐԱԿ.

1 Եթե Դուք բնակվել եք հյուրանոցում, հյուրատանը, հոթելում, հոսթելում կամ հյուրանոցային տիպի հանրակացարանում (այսինքն, ոչ թե ցանկացած հանրակացարանում), ապա Ձեզ պարտավոր են գրանցել առաջին իսկ օրվա ընթացքում ամբողջ այն ժամկետով, որը Դուք նախատեսում եք ապրել տվյալ վայրում: Դրա համար Ձեզ պարզապես անհրաժեշտ է դիմել ադմինիստրատորին:

ԿԱՐԵՎՈՐ Է. Հյուրանոցների, հոսթելների, հանրակացարանների աշխատակիցները երբեմն պահանջում են իրենց տալ անձնագիր որպես «գրավ» կամ «գրանցում կատարելու համար». Նրանք չունեն այդ իրավունքը: Դուք միայն պարտավոր եք ներկայացնել նրանց Ձեր փաստաթղթերը և նրանք պետք է պատճենահանեն: Եթե նրանք վերցրել են ձեր փաստաթղթերը և հրաժարվում են վերադարձնել դրանք ցանկացած պատրվակով, զանգահարեք ոստիկանություն՝ 112 հեռախոսահամարով:

2 **Եթե Դուք պլանավորում եք ապրել ծանոթների, հարազատների մոտ կամ վարձակալել սենյակ կամ բնակարան,** ապա տանտերը պարտավոր է Ձեզ գրանցել 7 աշխատանքային օրվա ընթացքում այն պահից սկսած, երբ Դուք մուտք եք գործել Ռուսաստան: Դա անելու համար Դուք պետք է միասին գնաք **ՆԳՆ ՄՀԳՎ կամ Ձեր բնակության տարածքի հանրային ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոն (ՄՖԿ), կամ** բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման

առցանց պորտալի միջոցով (Госуслуги) **կամ փոստ**, որտեղ Ձեզ կտան ձևաթուղթ «ծանուցում օտարերկրյա քաղաքացու գտնվելու վայր ժամանման մասին»: Ծանուցման մի կողմում անհրաժեշտ է նշել տեղեկատվություն կացարանի սեփականատիրոջ մասին («ընդունող կողմ»), իսկ մյուս կողմում՝ Ձեր մասին («գտնվելու վայրում հաշվառման ենթակա անձ»): Ձևաթղթին անհրաժեշտ է կցել Ձեր անձնագրի պատճենները (միայն անձնագրի սեփականատիրոջ մասին տեղեկատվությամբ էջը), ինչպես նաև Ձեր միգրացիոն քարտը:

ՆԳՆ ՄՀԳՎ-ում (կամ ՀԾՄԿ (МФЦ) ձևակերպումը անվճար է, բայց Դուք պետք է Ձեզ հետ ունենաք փաստաթղթերի պատճեններ (անձնագիր և միգրացիոն քարտ)՝ նախապես պատճենահանեք դրանք: Դուք անմիջապես կարող եք վերցնել գրանցումը:

Գրանցում «Պետծառայություններ» («Госуслуги») հանրային ծառայությունների ինտերնետ պորտալի միջոցով: Դուք պետք է մուտք գործեք gosuslugi.ru կայք, ընտրեք «օտարերկրյա քաղաքացիների գտնվելու վայրի հաշվառում» ծառայությունը և սեղմեք «ստանալ ծառայություն», ապա լրացրեք անհրաժեշտ դաշտերը և կցեք միգրանտի և ընդունող կողմի փաստաթղթերի սկան-պատճենները և ուղարկեք ձևաթուղթը:

ԽՈՐՀՈՒՐԴ

Փոստում հնարավոր է Ձեզանից գանձեն չնչին վճար պատճենահանման, Ձեր ծանուցումը **ՆԳՆ** ՄՀԳՎ առաքելու համար (ընդամենը մոտ 250-300 ռուբլի), որը կարվի հենց տեղում: Փոստային բաժանմունքի նշումով գրանցումը Դուք ստանում եք անմիջապես տեղում:

Գրանցումը կարելի է ձևակերպել երեք ամսով: Հետագայում եթե Դուք գտել եք աշխատանք կամ ունեք պայմանագիր կամ արտոնագիր, Դուք կարող եք երկարաձգել այն:

Եթե Դուք չեք գտել պաշտոնական աշխատանք, Դուք պարտավոր եք դուրս գալ մինչև Ձեր գրանցման ավարտը:

3 Ձեզ կարող է գրանցել նաև գործատուն, եթե նա ապահովում է Ձեզ կացարանով.

ԿԱՐԵՎՈՐ Է. 2018 թ. - ից Ռուսաստանում օտարերկրյա քաղաքացին կարող է միգրացիոն հաշվառման կանգնել (գրանցվել) միայն փաստացի բնակության վայրում:

ԿԱՐԵՎՈՐ Է. Եթե գործատուն պատրաստ է ձևակերպել Ձեր գրանցումը, նա իրավունք չունի դրա դիմաց վերցնել Ձեր անձնագիրը:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ռուսաստանի տարածքում ժամանակավոր գրանցումով Դուք կարող եք գտնվել ոչ ավել, քան 90 օր կես տարվա ընթացքում (180 օրացուցային օր): Եթե այդ ժամկետից հետո Դուք չեք մեկնել կամ հնարավորություն չեք ստացել երկարաձգել գրանցումը՝ վճարելով արտոնագրի համար կամ աշխատանքի տեղավորվելով, Դուք խախտում եք օրենքը. Ձեզ կարող են տուգանել և արտաքսել երկրից՝ արգելելով մուտքը մինչև 10 տարի ժամկետով:

ԿԱՐԵՎՈՐ Է. Կան շատ ընկերություններ, որոնք առաջարկում են վճարի դիմաց ձևակերպել գրանցում և այլ փաստաթղթեր: Այդ ընկերությունների մեծ մասը տալիս են կեղծ փաստաթղթեր: Ուշադիր եղեք, քանի որ գրեթե անհնար է անզեն աչքով լինը, որ Ձեր ձեռքերում կեղծ փաստաթղթեր են, կրելու եք Դուք: Իսկ եթե Դուք նման կեղծ գրանցում ներկայացնեք միգրացիոն ծառայության կամ ոստիկանության աշխատակցին, ձեզ կտուգանեն և կարող են արտաքսել երկրից՝ արգելելով մուտքը մինչև 10 տարի:

ԱՅՍՊԻՍՈՎ

- Գրանցվել:
- Ժամանելով Ռուսաստան՝ 7 օրվա ընթացքում ձևակերրպեք գրանցումը՝ հյուրանոցի կամ հանրակացարանի, տան սեփականատերերի միջոցով, որտեղ մնում եք կամ գործատուի միջոցով:
- Ոչ մեկին մի՛ տվեք Ձեր անձնագիրը «գրանցումը ձևակերպելու համար» կամ որպես «գրավ»:
- Մի՛ վստահեք կազմակերպություններին, որոնք առաջարկում են փողով գրանցում: Նրանք կարողեն Ձեզ կեղծ փաստաթղթեր տալ:
- Հիշե՛ք. Գրանցման բացակայությունը կամ կեղծ փաստաթղթերի ներկայացումը կարող է հանգեցնել տուգանքի և արտաքսմանը: Ռիսկի մի գնացեք:
- Պահեք գրանցումն անձնագրի և միգրացիոն քարտի հետ մինչև Ռուսաստանից մեկնումը:

ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ: ԱՐՏՈՆԱԳԻՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՅՆ ՍՏԱՆԱԼ

Ռուսաստանում օրինական հիմունքներով աշխատելու համար Ձեզ անհրաժեշտ է արտոնագիր (բացառությամբ Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Հայաստանի քաղաքացիների համար): **Արտոնագիրը** կարող է ձևակերպվել ֆիզիկական անձի, կազմակերպությունում (ընկերությունում) կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատելու համար:

ԿԱՐԵՎՈՐ Է. Եթե Դուք աշխատելու եք Ռուսաստանի քաղաքացու մոտ, կատարելով անձամբ նրա համար աշխատանք, ապա Դուք պետք է ստանաք արտոնագիր նախատեսված ֆիզիկական անձի մոտ աշխատելու համար (օրինակ, եթե Դուք խնամում եք նրա երեխաներին, հոգ եք տանում հիվանդ կամ տարեց մարդկանց մասին, մաքրում եք կամ պատրաստում եք սնունդ տնային պայմաններում, օգնում եք վերանորոգել կամ կառուցել տունը/բնակարանը և այլն): Այլ դեպքերում, աշխատանքի համար արտոնագիրը ձևակերպվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ուշադրություն դարձրեք. եթե Դուք աշխատում եք անհատի համար, Ձեզ հետ, ամենայն հավանականությամբ, պետք է կնքվի քաղաքացիական-իրավական պայմանագիր (կամ ծառայությունների մատուցման պայմանագիր): Պայմանագրերի տեսակների մասին ասվում է ստորև:

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Արտոնագիր ստանալիս ուշադրություն դարձրեք, թե Ռուսաստանի Դաշնության որ սուբյեկտի տարածքում և գործունեության որ տեսակն է ձեզ թույլատրված: **Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներն են Մոսկվա** և **Սանկտ Պետերբուրգ քաղաքները,** ինչպես նաև Ռուսաստանի կազմի մեջ մտնող **մարզերը, շրջանները կամ հանրապետությունները:** Դուք չեք կարող աշխատել մեկ այլ մասնագիտությամբ կամ Ռուսաստանի այլ տարածաշրջանում, որը նշված չի արտոնագրի մեջ:

Ի սկզբանե արտոնագիրը կարող է ձևակերպվել մեկից մինչև **12 ամիս ժամկետով:**

Աշխատանքի արտոնագրի գործողության ընդհանուր ժամկետը կազմում է տրման օրվանից ոչ ավել քան 12 ամիս: Այնուհետև այդ նույն արտոնագիրը հնարավոր է երկարացնել, բայց ոչ ավելի, քան 12 ամսով: Այսինքն՝ նույն արտոնագիրը կարող է գործել մինչև **2 տարի:** Դրանից հետո արտոնագիրն արդեն երկարացնել չի կարելի, և Դուք պարտավոր եք մեկնել Ռուսաստանից:

Արտոնագրերը տրամադրում են Միգրացիայի հարցերով գլխավոր վարչության (ГУВМ МВД) բաժանմունքները կամ պետական ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոնները (ՄՓԿ), սակայն դրանցից ոչ բոլորը: Մի շարք շրջաններում գոյություն ունեն Միասնական միգրացիոն կենտրոններ (ԵՄԿ): Ավելի դյուրին է ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) աշխատակցին, ով ձևակերպում է Ձեր գրանցումը, հարցնել, թե որտեղ կարելի է ստանալ արտոնագիր: Հստակեցրեք նաև փաստաթղթերի ընդունման օրերը և պատրաստի արտոնագրերի տրամադրման օրերը: Հաճախ ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) և ՀԵՄԿ (МФЦ) ունենում են բավականին բարդ աշխատանքային գրաֆիկ:

Արտոնագրի դիմումի ձևը կարող եք ներբեռնել ինտերնետում, օրինակ, այստեղ: https://migrantmedia.ru/wp-content/blanki-obrazcy/zayavlenie-na-patent-na-rabotu-na-2018-god.xlsx, կամ կարելի է անմիջապես վերցնել ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) և ՀԵՄԿ (МФЦ): Դուք կարող եք լրացնել այն ձեռքով (ավելի լավ է տպագիր տառերով) կամ համակարգչով:

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԵՎՈՐ Է. Երբեմն ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) աշխատակիցները սկսում են բծախնդրություն ցուցաբերել ձեռագրի հանդեպ և խորհուրդ են տալիս դիմել որոշակի ֆիրմաների, որոնք վճարի դիմաց «կօգնեն Ձեզ լրացնել փաստաթղթերը»: Դուք պարտավոր չեք դա անել: ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) աշխատակիցների նման գործողություններից կարելի է բողոքել ՆԳՆ սեփական անվտանգության դեպարտամենտ՝ **+7 (495) 667-07-30**:

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015 - ից սկսած բոլոր օտարերկրացի աշխատողներն արտոնագրի համար փաստաթղթեր ներկայացնելիս, պարտավոր են հաստատել ռուսաց լեզվի, պատմության և Ռուսաստանի օրենսդրության հիմունքների իմացությունը: Դա կարելի է անել 3 տարբերակով.

1) հանձնել հատուկ քննություն Ռուսաստանում և **ստանալ վկայական 5 տարի ժամկետով;**

2) ներկայացնել 8-րդ կամ 10-րդ դասարանների դպրոցական ավարտական վկայական, եթե Դուք ավարտել եք դպրոցը ԽՍՀՄ ժամանակներում մինչև 1991 թ. սեպտեմբերի 1-ը;

3) ներկայացնել Ռուսաստանի տարածքում ուսումնական հաստատության ավարտական դիպլոմ, որը ստացել եք 1991 թ. սեպտեմբերի 1-ից հետո:

Եթե Դուք քննություն եք հանձնելու, ապա ուշադրություն դարձրեք, որ այն վճարովի է և կարելի է հանձնել միայն խոշոր քաղաքներում և միայն հատուկ ուսումնական կենտրոններում: Բացի այդ, քննություն հանձնելու համար կարող է անհրաժեշտ լինել գրանցվել մի քանի օր կամ նույնիսկ շաբաթ առաջ: Իսկ պատրաստի հավաստագիր ստանալու համար պահանջվում է մինչև 10 աշխատանքային օր:

ԱՐՏՈՆԱԳՐԻ ՁԵԱԿԵՎՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՑԻ ԴԻՄՈՒՄԻՑ ՁԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԵԾ ՓԱԹԵԹ:

- **Ձեր անձնագիրը**
- **Անձնագրի պատճեն**
- Ռուսաստանում նոտարական կարգով վավերացված **անձնագրի թարգմանություն**
- **Միգրացիոն քարտ**, որտեղ նշված է այցի նպատակը - «աշխատանք»
- Բժշկական ապահովագրություն տրված այն սուբյեկտում (քաղաք, շրջան), որտեղ Դուք պատրաստվում եք աշխատել
- Արտոնագիր տալու մասին դիմում
- Հատուկ փաստաթուղթ, վտանգավոր հիվանդությունների բացակայության մասին (այն պետք է պատրաստել նախապես)
- Լեզվի, պատմության, Ռուսաստանի օրենսդրության հիմունքների իմացության վերաբերյալ քննության վկայականը
- **Գրանցում**
- Հարկի վճարման անդորրագիր: Ճշգրիտ ամսական գումարի չափը Դուք կարող եք ճշտել Ձեր ՆԳՆ ՄՀԳՎ -ում: Կարելի է վճարել հարկը կանխավ, բայց ոչ ավել, քան երեք ամիս: Վճարել հարկը Դուք կարող եք Խնայբանկի (Сбербанк) ցանկացած բաժանմունքում: Անդորրագրի լրացման օրինակը (հաշվի համարը և այլ վավերապայմանները) կարելի է գտնել ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) կամ իմանալ ՀԾՄԿ (МФЦ)
- 2 գունավոր **լուսանկար** 3X4 սմ (նրանք պետք են դիմումի վրա փակցնելու համար):

ԿԱՐԵՎՈՐ Է. Շատ շրջաններում ՀԾՄԿ (ՄՓԿ) առաջարկում է ձևակերպել միանգամից ամբողջական փաստաթղթերի փաթեթը: Սա նշանակում է, որ, դիմելով ՀԾՄԿ (ՄՓԿ), Դուք միայն այնտեղ պետք է գնեք բժշկական ապահովագրություն, հանձնեք քննությունները, անցնեք բժիշկական զննում, թարգմանեք ռուսերեն և վավերացնեք Ձեր փաստաթղթերը: Հարկ է իմանալ բոլոր նրբությունները նախապես, որպեսզի կրկնակի չվճարել նույն փաստաթղթի համար:

ՄՄԿ (ԵՄՑ) փաստաթղթերի ձևակերպման համար մոտավոր արժեքը 20-25 հազար ռուբլի է: Տեղեկությունների համար կարող եք դիտել Մոսկովյան ՄՄԿ (ԵՄՑ) կայք՝ **http://migrantcenter.ru/cont/oformlenie-patenta-opr-153.html**:

Լրացուցիչ Դուք պետք է վճարեք ամսական հարկը: Գումարի չափը 2015թ. Ռուսաստանի տարբեր շրջաններում կարող է տարբերվել մի քանի անգամ: Օրինակ, Մոսկվայում մեկ ամսվա համար 4000 ռուբլի է, այլ շրջաններում գումարը կարող է կազմել 1500 ռուբլուց մինչև 8000 ռուբլի մեկ ամսվա համար:

Հիշեք, որ քննությունների հանձնումը և բժշկական հաստատությունների զննումը պահանջում է շատ ժամանակ. քննությունների և մասնագետների մոտ ընդունելության համար պետք է գրանցվել նախօրոք, բոլոր տեղեկանքներն ունեն վավերականության ժամկետը, իսկ ՀԾՄԿ-ում շատ հաճախ բազմօրյա հերթեր են: Սա հաշվի առեք, երբ պատրաստվում եք գնալ Ռուսաստան աշխատելու:

Կարևոր չէ, թե Դուք փորձելու եք փաստաթղթերի գոնե մի մասը պատրաստել ինքնուրույն, թե դիմելու եք ՄՄԿ (ԵՄՑ) կամ ՀԾՄԿ (ՄՓԿ), եթե Դուք ինչ-ինչ պատճառներով Ռուսաստան մուտք գործելու պահից սկսած 30 օրվա ընթացքում չհասցնեք հավաքել բոլոր փաստաթղթերը և ներկայացնել դրանք, ապա Դուք պետք է վճարեք տուգանք 10-15 հազար ռուբլի, հակառակ դեպքում, արտոնագրի փաստաթղթերը չեն ընդունի:

Բացի այդ, իշխանությունները կարող են ցանկացած պահի ժամանակավորապես արգելել արտոնագրերի տրամադրումը տվյալ շրջանում և Դուք ստիպված կլինեք կա՛մ այլ շրջանում արտոնագիր ստանալ, կա՛մ լքել Ռուսաստանը, որպեսզի չխախտեք միգրացիոն օրենսդրությունը:

Հիշեք, որ ավելի լավ է ամեն ինչ նախապես հարցնել, այդ թվում՝ այս գրքույկում տպագրված հեռախոսահամարներով:

ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ.

ՆԳՆ ՄՀԳՎ-ում (ГУВМ МВД), ՀԾՄԿ-ում (МФЦ) կամ ՄՄԿ-ում (ЕЦМ) պետք է գրանցեն Ձեր դիմումը և դրա պատճենը տան Ձեզ՝ դրոշմակնիքով և ընդունման ամսաթվով:

Ձեզ աշխատանքի արտոնագիր կտան ոչ ուշ քան 10 աշխատանքային օր հետո: Ձեզ չեն կարող մերժել արտոնագրի տրամադրումը, եթե Դուք տրամադրել եք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Եթե Ձեր փաստաթղթերը սխալ են ձևակերպվել, կամ ինչ-որ բան թերի է և Ձեզ արտոնագիր չեն տվել, ապա Ձեզ պարտավոր են տալ գրավոր մերժում՝ պատճառների պարզաբանումով: Այսպիսով, Դուք կարող եք ուղղել սխալը և նորից ներկայացնել փաստաթղթերը:

Արտոնագիրը Դուք պետք է ստանաք անձամբ:

Արտոնագիրը երկարաձգելու դեպքում, ըստ օրենքի, Դուք պետք է հաջորդ ամիսների հարկը վճարեք արտոնագրի գործողության ավարտից **ոչ ուշ, քան 1 օր առաջ:** Գործնականում հաճախ է պատահում, որ փողը գնում է բանկի միջոցով 3 կամ նույնիսկ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Որպես հետևանք ՆԳՆ ՄՀԳՎ բազայում Ձեր վճարումը ժամանակին չի արտացոլվի և կարող են խնդիրներ առաջանալ: Ուստի հուսալիության համար ավելի լավ է վճարել հարկը արտոնագրի լրանալուց մեկ շաբաթ առաջ. Պարտադիր **պահպանեք վճարման բոլոր կտրոնները**, քանի որ առանց դրանց Ձեր արտոնագիրը անվավեր կլինի:

Արտոնագրերի մասին օրենքի ընդունումից հետո, ՆԳՆ ՄՀԳՎ ի սկզբանե արտոնագրի երկարաձգումը հավասարեցրեց գրանցման ավտոմատ երկարաձգման հետ. այսինքն՝ հաջորդ ամսվա հարկի վճարումը նշանակում է գրանցման ավտոմատ երկարաձգում առանց գնալու և դա ձևակերպելու անհրաժեշտության: Սակայն վերջին շրջանում օրենքն այլ կերպ է մեկնաբանվում: Հաշվի առնելով, որ շատ աշխատողներ տուգանվել են և նույնիսկ արտաքսվել են գրանցման բացակայության պատճառով, չնայած այն հանգամանքին, որ նրանք ունեին գործող արտոնագրեր, խորհուրդ ենք տալիս ամեն դեպքում գրանցումը երկարաձգել յուրաքանչյուր 3 ամիսը մեկ:

Մեկ արտոնագրով Դուք կարող եք պաշտոնապես աշխատել մի քանի գործատուների մոտ:

Արտոնագիրն իրավունք է տալիս աշխատել Ռուսաստանի Դաշնության միայն այն սուբյեկտում, որտեղ տրվել է: Ռուսաստանի Դաշնության սուբյեկտները Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ քաղաքներն են, ինչպես նաև Ռուսաստանի կազմի մեջ մտնող մարզերը, շրջանները կամ հանրապետությունները: **Բացի այդ, 2015 թվականի հուլիսից արտոնագրով կարելի է աշխատել միայն այն մասնագիտությամբ, որը դրանում նշված է:**

ԱՅՍՊԻՍՈՎ

ԱՅՍՊԻՍՈՎ

- *Եթե Դուք կաշխատելու եք ինչ-որ մեկի համար, Դուք պարտավոր եք ստանալ արտոնագիր (բացառությամբ Ղազախստանի, Ղրղզստանի, Հայաստանի և Բելառուսի քաղաքացիները):*

- *Արտոնագրի համար փաստաթղթերը կարելի է ներկայացնել ՆԳՆ ՄՀԳՎ կամ լիազորված կազմակերպություն՝ ՀԾՄԿ կամ ՄՄԿ:* ***Արտոնագիրը Դուք պետք է ստանաք անձամբ:***

- *Ոչ ոք չի կարող ստիպել Ձեզ վճարել գումար ինչ-որ ընկերությանը արտոնագրի դիմումը լրացնելու համար: Բայց այն ավելի լավ է լրացնել համակարգչով կամ, եթե նման հնարավորություն չկա, տպագիր տառերով, ընթեռնելի ձեռագրով:*

- *Արտոնագիր ստանալու կամ երկարաձգելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ամսվա համար վճարել հարկ: Մի սպասեք, մինչև վերջին օրը. բանկի միջոցով վճարումը կարող է տևել մի քանի օր մինչև այն կստանան ՆԳՆ ՄՀԳՎ -ում:*

- *Արտոնագիրը տրվում է միայն անձամբ՝ փաստաթղթերը ներկայացնելուց 10 աշխատանքային օր հետո:*

ԱՅՍՊԻՍՈՎ

- Եթե Դուք ներկայացրել եք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, արտոնագիր տրամադրելը Ձեզ չեն կարող մերժել:

- Եթե Ձեր փաստաթղթերով ինչ-որ բան սխալ է, ապա Ձեզ պետք է տան բացատրություններով թուղթ, թե ինչու են մերժել արտոնագրի տրամադրումը: Այդպես Դուք կարող եք ուղղել սխալը: **Բայց արտոնագիր ստանալու համար փաստաթղթերը Դուք կարող եք կրկին հանձնել միայն մեկ տարի անց:**

- Նույնիսկ եթե Դուք ունեք գործող արտոնագիր, Ձեզ, միևնույն է, անհրաժեշտ է գրանցում: Երկարածգեք այն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ:

- Երբեք և ոչ մեկին մի՛ տվեք Ձեր անձնագիրը: Առանց անձնագրի Դուք կարող եք դառնալ հանցագործների զոհ և ընկնել ստրկության մեջ:

- Գրանցման ծախսերը չնչին են: Եթե գործատուն ասում է Ձեզ, որ գրանցման ձևակերպմանն օգնելու համար կվերցնի Ձեր ամսական աշխատավարձը (երկու ամիս, երեք ամիս), դա խաբեություն է և գողություն:

ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՀԵՏ

Այնպիսով, Դուք ձևակերպել եք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Ռուսաստանում օրինական ապրելու և աշխատելու համար՝ Դուք ունեք գրանցում և արտոնագիր:

Եվ ահա այն երկար սպասված աշխատանքի տեղավորման պահը: Ցավոք, գործատուների շրջանում հանդիպում են (և հաճախ) մարդիկ, ովքեր հույս ունեն, որ միգրանտ աշխատողին կարելի է խաբել՝ ստիպել ավելի ու ավելի վատ պայմաններում աշխատել, ավելի քիչ վճարել, կամ էլ ընդհանրապես չվճարել՝ օգտվելով սեփական իրավունքների վերաբերյալ Ձեր անտեղեկատվությունից...

Նման իրավիճակից խուսափելու լավագույն միջոցը գործատուի հետ ճիշտ կազմած և **ստորագրած պայմանագիր ունենալն է:**

ԻՆՉՊԻՍԻ՞Ն Է ԼԻՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Գործատուի հետ պայմանագիրը կարող է լինել երկու տեսակ՝ աշխատանքային կամ կապալի պայմանագիր (այլ կերպ՝ ծառայությունների մատուցման պայմանագիր): Որպեսզի իմանաք, թե ինչ տեսակի պայմանագր է Ձեր մոտ, պարզապես նայեք վերևի տողին՝ այնտեղ պետք է նշված լինի «Աշխատանքային պայմանագիր», «Կապալի պայմանագր» և այլն. այնտեղ պետք է նշված լինի նաև պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը:

Պայմանագրերի միջև տարբերությունն այն է, որ եթե Դուք ունեք որևէ պայմանագիր, բացառությամբ աշխատանքային, ապա Դուք իրավունք չունեք վճարովի արձակուրդի կամ ժամանակավոր անաշխատականության թերթիկի:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ՆՇՎԱԾ ԼԻՆԻ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

1 **Ով է Ձեր գործատուն** Շատ կարևոր է, որ գործատուի հետ ցանկացած պայմանագրում նշված լինի գործատուի ամբողջական իրավաբանական անվանումը, եթե դա ընկերություն է (կամ նրա լրիվ անունը, հայրանունը և ազգանունը, եթե դա մասնավոր անձ է), նրա հասցեն (քաղաք, փողոց, տուն, փոստային ինդեքս), հեռախոսահամարը, բանկերում նրա հաշվարկային հաշիվները:

ԿԱՐԵՎՈՐ Է. Պետք է իմանաք Ձեր գործատուին. դա աշղեկ չի, որը Ձեզ միայն իր անունը և բջջային հեռախոսահամարն է ասում, ոչ էլ որևէ կասկածելի միջնորդ, այլ ընկերություն է, որը վճարում է այդ աշղեկին: Հենց այս ընկերությունից Դուք կարող եք պահանջել պարտքերի վճարումները կամ փոխհատուցումները, եթե առաջանա դրա անհրաժեշտությունը:

2 **Ով եք Դուք** Այնտեղ պետք է նշվեն Ձեր ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն Ձեր երկրում, Ռուսաստանում գրանցման հասցեն, անձնագրային տվյալները:

ԿԱՐԵՎՈՐ Է. Պայմանագրում պետք է հստակ նշված լինեն Ձեր տվյալները. չէ՞ որ հենց դրանք են հաստատում, որ հենց Դուք պետք է ստանաք Ձեր աշխատավարձը:



3 Ինչ ժամկետով է կնքված պայմանագիրը Աշխատանքային պայմանագիրը, ըստ էության, կարող է կնքվել ցանկացած ժամկետով (օրինակ, 1 ամիս), և կարող է լինել անժամկետ (այսինքն, Ձեզ վերցնում են մշտական աշխատանքի, առանց նշելու տարիների և ամիսների քանակը), բայց, սովորաբար գործատուները, ում մոտ աշխատում են օտարերկրյա աշխատողներ, պայմանագրը կնքում են արտոնագրի ժամկետով:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ռուսական օրենսդրությամբ նախատեսում է պատճառների սահմանափակ ցանկ, որոնց կիրառմամբ մարդուն կարելի է ազատել մինչև աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալը: Հիմնականում դրանք կապված են ձեռնարկության փակման, աշխատակազմի կրճատման կամ աշխատանքային կարգապահության կոպիտ խախտումների հետ՝ անհարգի բացակայություն, հարբեցողություն, գողություն, պետական կամ առևտրային գաղտնիքի բացահայտում Ոչ մեկ չի կարող ազատվել անձնական պատճառով, հիվանդության կամ հղիության համար: Շատ դեպքերում, ազատման ժամանակ Ձեզ նախատեսված է փոխհատուցում: Եթե կարծում եք, որ Ձեզ անարդարացիորեն են հեռացրել աշխատանքից, զանգահարեք գրքույկի վերջում նշված հեռախոսահարներով:

4 Աշխատավարձի չափը Հաճախ պայմանագրում գործատուները գրում են ավելի քիչ գումար, քան այն, որ խոստացել էին Ձեզ վճարել ապագայում: Ինչո՞ւ: Որպեսզի անցկացնեն փողերը «գորշ», կիսալեգալ սխեմայով, խուսափեն ավելորդ հարկերից: Արդյոք գործատուն կկատարի՞ իր խոստումը: Եթե ոչ, ապա ապացուցել Ձեր իրավացիությունը Դուք չեք կարող՝ Ձեր ստորագրությունը պայմանագրի տակ նշանակում է համաձայնություն աշխատել այն գումարի դիմաց, որը նշված է այնտեղ. Համաձայնելով այդ պայմաններին՝ Դուք լավ ծառայություն եք մատուցում գործատուին, բայց վատ ծառայություն ինքներդ Ձեզ:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ձեր աշխատավարձից կհանվի եկամտահարկը՝ 13% կամ 30% : Եթե Դուք գտնվում եք Ռուսաստանում ավելի քան 183 օր մեկ տարվա ընթացում և Դուք կարող եք հաստատել այն փաստաթղթերով (գրանցումով, արտոնագրով, աշխատանքային պայմանագրով ավելի քան 183 օր, և այլն), ապա հարկը կկազմի 13%, ինչպես Ռուսաստանի քաղաքացիների համար, հակառակ դեպքում՝ 30%:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ամեն դեպքում գործատուն իրավունք չունի լրիվ դրույքի համար օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից քիչ վճարել ձեզ լրիվ զբաղվածության համար, այսինքն՝ շաբաթական 40 ժամի համար: Ռուսաստանում 2020 թվականին այն կկազմի 12 130 ռուբլի: Առանձին շրջաններ կարող են ունենալ նվազագույն աշխատավարձի ավելի բարձր մակարդակ. Հաջորդ էջում՝ նման տարածաշրջանների ցանկն ու 2020 թվականի թվերը:

5 **Աշխատանքային ժամերը** Աշխատանքային պայմանագրում պետք է նշվեն հերթափոխի գրաֆիկը, աշխատանքային ժամերը, ընդմիջման ժամը և այլն: Գործատուն չի կարող կամայականորեն փոխել այդ պայմանները: Նա պետք է Ձեզ տեղեկացնի այդ մասին և ստանա Ձեր համաձայնությունը: Խոշոր ձեռնարկությունների պայմանագրում երբեմն գրվում է, որ այս տեղեկատվությունը կարգավորվում է ներքին կանոնակարգով: Այս դեպքում մինչև պայմանագրի ստորագրումը պարտադիր է ծանոթացեք և այս պարագայում Դուք կիմանաք, թե ինչ պայմանների եք համաձայնվում: Ցավոք, գործատուն կարող է փոխել այդ կանոնները, առանց Ձեր իմացության, այնպես որ, ավելի լավ է, որ հնարավորին շատ տեղեկատվություն գրված լինի աշխատանքային պայմանագրում:

6 **Աշխատանքային պարտականությունները** Պայմանագրում պետք է հստակ գրված լինի, թե կոնկրետ ինչ աշխատանք պետք է կատարեք, որոնք են Ձեր աշխատանքային պարտականությունները: Օրինակ, եթե Դուք փականագործ եք, Ձեզ չեն կարող ստիպել լվանալ ափսեները կամ ուղարկել բեռնատարման:

7 **Այլ էական պայմաններ** Առաջին հերթին, դա արտադրական նորմերն են: Այնուհետև, պարգևատրման պայմանները կամ արձակուրդի տևողությունը. Գործատուն կարող է ներառել, օրինակ, առևտրային գաղտնիքի պահպանման պայմանները և այլն:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ցանկացած պայմանագիր պետք է կազմված լինի երկու օրինակից: Ընդ որում, Դուք պարտավոր չեք անմիջապես ստորագրել պայմանագիրը. Դուք կարող եք վերցնել այն տուն, որպեսզի ուշադիր կարդալ, կամ խորհրդակցել իրավաբանի հետ (օրինակ, զանգահարելով այս գրքույկի վերջում նշված հեռախոսահամարներով): Դուք և Ձեր գործատուն պետք է ստորագրեք երկու օրինակները, իսկ գործատուն պարտավոր է դնել նաև այն կազմակերպության կնիքը, որը նշված է պայմանագրում որպես գործատու: Դրանից հետո, պայմանագրի մեկ օրինակը մնում է Ձեզ, սա Ձեր փաստաթուղթն է:

Եթե գործատուն շտապեցնում է Ձեզ պայմանագրի ստորագրման գործում կամ չի տալիս երկրորդ օրինակը Ձեր ձեռքը, ամենայն հավանականությամբ, դրա հետևում կա խաբեություն, և տեքստում կա մի բան, որը Ձեզ դուր չի գա, կամ տեքստում կա ինչ-որ մի բան, որ կարող է ապացուցել գործատուի անբարոյական գործողությունները: Նման դեպքերում զգուշացե՛ք:

Եթե Ձեզ հետ կնքել եք աշխատանքային պայմանագիր, ապա Ձեր աշխատանքի դուրս գալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում գործատուն պարտավոր է գրառում կատարել **ռուսական նմուշի աշխատանքային գրքույկում:** Նշենք, որ Ռուսաստանի տարածքում գործում են միայն ռուսական աշխատանքային գրքույկները և 1974 թվականի խորհրդային նմուշները: Ձեր երկրից աշխատանքային գրքույկի գրառումը Ռուսաստանում անվավեր է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

Եթե Ձեզ հետ **կապալի կամ ծառայությունների մատուցման պայմանագիր են կնքել, ապա այն բանից հետո**, երբ Դուք կատարել եք Ձեր աշխատանքը, Դուք և Ձեր գործատուն պետք է ստորագրեք **աշխատանքի ընդունման ակտի երկու նմանատիպ օրինակ**: Ակտում պետք է զետեղված լինի աշխատանքի ընդունման ամսաթիվը, կազմակերպության կնիքը, որտեղ Դուք աշխատում եք, ղեկավարի ստորագրությունը: Եթե Դուք աշխատում եք ֆիզիկական անձի մոտ, ապա կնիք չի լինի:

Գործատուի ստորագրությամբ և կնիքով մեկ օրինակ մնում է Ձեզ մոտ. սա փաստաթուղթ է, որը հաստատում է, որ Դուք կատարել եք աշխատանքը և պետք է վճարվեք:

ԿԱՐԵՎՈՐ Է. Աշխատանքի ընդունվելուց հետո անմիջապես **հայտնեք Ձեր հարազատներին** կազմակերպության կամ ընկերության լրիվ անվանումը, որտեղ Դուք աշխատում եք (կամ Ձեր գործատուի անունը, եթե դա մասնավոր անձ է), պայմանագրում գրված հասցեն, գործատուի հեռախոսը և տնօրենի ազգանունը, անունը և հայրանունը (սովորաբար դա նշված է պայմանագրում): Եթե Դուք չեք աշխատում այն հասցեով, որը գրված է պայմանագրում, ապա տեղեկացրեք հարազատներին բոլոր այն հասցեները, որտեղ Դուք կարող եք գտնվել:

ԱՅՍՊԻՍՈՎ

- Պարտադիր պայմանագիր կնքեք գործատուի հետ՝ աշխատանքային կամ կապալի պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր):

- Պայմանագիրը ստորագրվում է երկու օրինակից, գործատուն պետք է վավերացնի այն ոչ միայն ստորագրությամբ, այլև կնիքով և տալ երկրորդ օրինակը Ձեզ:

- Եթե Ձեզ շտապեցնում են, թույլ չեն տալիս կարդալ պայմանագրի տեքստը, չեն տալիս երկրորդ օրինակը, դա խաբեության նշան է:

- Պայմանագրում պետք է հստակ նշվի, թե ով է Ձեր գործատուն, ինչ ժամկետով է կնքվել պայմանագիրը, ինչ աշխատանք, ինչ ժամանակացույցով և ինչ աշխատավարձով եք Դուք կատարելու:

- Եթե աշխատավարձը պայմանագրում տարբերվում է այն բանից, որ Դուք խոստացել է բանավոր, Ձեզ կարող են խաբել:

- Եթե Դուք աշխատում եք աշխատանքային պայմանագրով, Ձեզ պարտավոր են գրարում անել ռուսական նմուշի աշխատանքային գրքույկում (օտարերկրյա աշխատանքային գրքույկները Ռուսաստանում անվավեր են):

- Եթե Դուք աշխատում եք կապալի պայմանագրով կամ ծառայությունների մատուցման պայմանագրով, ապա աշխատանքը կատարելուց հետո Դուք և գործատուն ստորագրում եք աշխատանքի ընդունման ակտ (երկու օրինակից՝ մեկը Ձերն է, մեկը՝ գործատուինը), որի հիման վրա Դուք ստանում եք գումար:

- ԱՆՊԱՅՄԱՆ տեղեկացրեք հայրենիքում և Ռուսաստանում բնակվող Ձեր հարազատներին և մերձավորներին, որտեղ եք Դուք ապրում և աշխատում, բոլոր հասցեները և հեռախոսները, որոնցով Դուք կարող եք գտնել:

ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

Իմացե՛ք, որ աշխատավայրում Դուք ունեք իրավունքներ, նրանք, ընդհանուր առմամբ, ոչնչով չեն տարբերվում ռուսաստանցի աշխատողների իրավունքներից: Ոչ ոք չի կարող զրկել ձեզ աշխատանքային իրավունքներից, նույնիսկ եթե Դուք ունեք ժամկետանց գրանցում, ժամկետը լրացել է այլ փաստաթղթեր կամ նրանք կեղծ են:

ԻՄԱՑԵ՛Ք ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:

- Անկախ ձեր քաղաքացիությունից, գրանցման և աշխատանքի թույլտվության առկայությունից, **ոչ ոք իրավունք չունի Ձեզ ստիպել աշխատել:**

- Անկախ ձեր քաղաքացիությունից, գրանցման և աշխատանքի թույլտվության առկայությունից, **Ձեզ պարտավոր են աշխատավարձը վճարել ժամանակին** և **ամբողջ ծավալով:**

- Ռուսաստանում գործատուներին **արգելվում է տուգանել աշխատողներին:**

ԿԱՐԵՎՈՐԸ՝ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Աշխատավարձը Ձեզ պետք է վճարեն միայն ռուբլիով: Հաճախ օրենքը թույլ է տալիս աշխատավարձի ոչ ավել քան 20% չափով վճարել ոչ թե ռուբլիով, այլ, օրինակ, սննդամթերքով կամ Ձեր ձեռնարկության արտադրանքով: Բայց այդպես կարելի է անել միայն եթե այդ մասին նշված է Ձեր աշխատանքային պայմանագրում, և Դուք գրավոր դիմում եք տվել, որ համաձայն եք նմանատիպ վճարմամբ ձևին:

Հաճախ գործատուները աշխատավարձի մեծ մասը փորձում են **ձևակերպել պարգևավճարի կամ խրախուսման այլ ձևերով:** Ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ Ձեր աշխատանքային պայմանագրում որքան հնարավոր է մանրամասը գրված լինի ինչի համար է Ձեզ տրվելու խրախուսանքը, ինչպիսին պետք է լինեն նորմերը, պարգևավճարի ցուցանիշներն ու պայմանները:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ըստ օրենքի գործատուն իրավունք չունի Ձեզնից վերցնելու որևէ տուգանք: Հետևաբար նշել այդ մասին նաև պայմանագրում:

ԿԱՐԵՎՈՐ Է. Եթե Դուք աշխատում եք աշխատանքային պայմանագրով, ապա աշխատավարձը պարտավոր են Ձեզ վճարել ամսական երկու անգամ, այսինքն ամեն երկրորդ շաբաթը մեկ: Եթե 15 օրից ավել չեն վճարում Ձեր աշխատավարձը Դուք իրավունք ունեք դադարացնելու աշխատանքը՝ գրավոր այդ մասին տեղյակ պահելով գործատուին: Սակայն օրենքում կան շատ նրբություններ և, որպեսզի աշխատավարձի չվճարման դեպքում ճիշտ վարվեք, զանգահարեք այս գրքույքի վերջում նշված հեռախոսահամարներով և ստացեք խորհրդատվություն, թե ինչպես ճիշտ պաշտպանել Ձեր իրավունքները:

ԱՇԽԱՏԵԼ ԱՆՎՏԱՆԳ

1 **Ինչ պետք է անի գործատուն.** Որտեղ էլ որ աշխատեք, լինի դա մեծ ձեռնարկություն, թե որպես տնային աշխատող, Ձեր գործատուն պարտավոր է պահպանել Աշխատանքային օրենսգիրքը, այդ թվում նաև սանիտարական նորմերը, ապահովել **աշխատանքի անվտանգության կանոնները:** Գործատուն անպայման պարտավոր է Ձեզ հետ անցկացնել **տեխնիկայի անվտանգության գծով հրահանգավորում՝** պատմելով թե ձեռնարկությունում որտեղ կան վտանգավոր գոտիներ և օբյեկտներ, ինչպես օգտվել պահպանիչ սարքավորումներից և այլն:

Եթե Դուք աշխատում եք վտանգավոր համարվող աշխատանքներում, ապա գործատուն **պարտավոր է Ձեզ ապահովել պաշտպանիչ միջոցներով**, այն էլ անվճար, օրինակ՝ ձեռնոցներ, աչքի, շնչառական ուղիների պահպանման միջոցներ, հատուկ հանդերձանք և այլն: Եթե գործատուն այս ամենը չի անում, ապա Դուք իրավունք ունեք հրաժարվելու աշխատանքից, որի պայմաններում կարող են վտանգվել Ձեր առողջությունն ու կյանքը: Ընդ որում, գործատուն պարտավոր է Ձեզ վճարել պարապուրդի համար, այսինքն աշխատանքային ժամերի, քանի որ Դուք չեք աշխատել այն պատճառով, որ Ձեզ չեն ապահովվել աշխատանքի անվտանգ պայմաններով:

2 **Ինչ պետք է անեք Դուք.** Դուք՝ որպես աշխատող, ևս պարտավոր եք **պահպանել աշխատանքի անվտանգ ապահովման** և **պահպանման կանոնները:** Եթե Դուք դա չեք անում ապա գործատուն պատասխանատվություն չի կրի, երբ Ձեզ հետ ինչ-որ բան պատահի և Դուք չեք ստանա

փոխհատուցում: Օրինակ, արգելված է աշխատանքի ժամին խմել ոգելից խմիչքներ, էլեկտրասարքավորումների, արտադրական սարքավորումների և այլնի հետ աշխատելիս խախտել տեխնիկայի անվտանգության կանոնները: Եթե ըստ տեխնիկայի անվտանգության պահպանման կանոնների Դուք պարտավոր եք կրել հատուկ հագուստ, սաղավարտ, օգտվել ապահովման հատուկ հարմարանքներով և այլն, ապա Դուք պարտավոր եք պահպանել այս պահանջները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՀԵՐԹԱՓՈԽԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ռուսական օրենքով սովորական **աշխատանքային շաբաթվա տևողությունը ոչ ավել քան 40 ժամն է**, իսկ վտանգավոր և վնասակար պայմաններում աշխատելիս՝ 36 ժամ: Շաբաթվա ընթացքում սովորական **աշխատանքային օրը 8 ժամ է** (այստեղ ճաշ ընդմիջումը ներառված չի) և 5 օր:

Սակայն գործատուն կարող է ունենալ հերթափոխի սահող ժամանակացույց 12 ժամյա կամ 24 ժամյա աշխատանքային հերթափոխերի համար: Ամեն դեպքում շաբաթվա ընթացքում 40 աշխատանքային ժամը պետք է պահպանվի:

Գոյություն ունեն հատուկ օրենքներ, որոնք ամրագրում են թե հերթափոխերի միջև մարդը որքան պետք է հանգստանա: Ոչ պակաս քան հերթափոխի հանգստին նախորդող կրկնակի տևողությունը: Արգելվում է 2 հերթափոխ անընդմեջ աշխատելը:

Հերթափոխերի ժամանակացույցը Ձեզ պետք է ցույց տան դրանց սկսելուց մեկ ամիս առաջ, որի տակ դնում եք Ձեր ստորագրությունը:

ԿԱՐԵՎՈՐ Է. Գործատուն չի կարող Ձեզ պարտադրել աշխատել ավելի շատ:

ԱՐՏԱԺԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔ

Միայն Ձեր գրավոր համաձայնությամբ գործատուն կարող է Ձեզ առաջարկել **արտաժամյա աշխատանք** (աշխատանք աշխատանքային օրը հետո), սակայն խիստ սահմանափակ ժամանակով (4 ժամ երկու օր անընդմեջ և 120 ժամ տարվա

ընթացքում) և **լրացուցիչ վճարումով:** Արտաժամյա աշխատանքի առաջին 2 ժամը վճարվում է մեկ ու կես դրույքաչափով, հետո՝ կրկնակի: Կամ էլ վճարի փոխարեն Դուք կարող եք խնդրել նմանատիպ ժամանակով լրացուցիչ հանգիստ:

Եթե գործատուն խնդրում է Ձեզ աշխատել հ**անգստյան կամ էլ տոնական օրերին**, ապա Ձեր գրավոր համաձայնությունը ևս անհրաժեշտ է նրան: Գործատուն կամ Ձեզ պետք է վճարի կրկնակի չափով, կամ էլ ամեն **աշխատած հանգստյան** կամ տոնական օրվա համար Ձեզ հատկացնի վճարովի հանգստյան օր:

ԿԱՐԵՎՈՐ Է. Միակ դեպքը, երբ առանց Ձեր համաձայնության կարող եք ներգրավվել արտաժամյա աշխատանքներին, դա տարերային աղետների կամ աղետների հետևանքների վերացումն է:

Եթե Ձեր պայմանագրում գրված է, որ Դուք ունեք **չկանոնակարգված աշխատանքային օր**, դա չի նշանակում, որ Դուք պետք է ամեն օր աշխատեք այնքան, որքան կասի գործատուն: Չկանոնակարգված աշխատանքային օրը նշանակում է, որ գործատուն **երբեմն** կարող է Ձեզ ընդգրկել արտաժամյա աշխատանքին:

ԿԱՐԵՎՈՐ Է. Հղի կանանց համար պետք է կրճատվեն աշխատանքային օրվա կամ աշխատանքային շաբաթվա տևողությունը: Դրանից բացի օրենքով արգելված է հղի կանանց ընդգրկել գիշերային ժամերին (ժամը 22.00 մինչև 6.00) և արտաժամյա աշխատանքին: Հղի կանայք օրենքով պաշտպանված են աշխատանքից ազատելուց: Խորհրդակցեք իրավաբանի հետ (հեռախոսահամարները գրքույքի վերջում են), թե ինչպես գործատուին հայտնել հղիության մասին և այդ կարևոր ժամանակահատվածում պաշտպանել Ձեր իրավունքները:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Ռուսաստանում տոնական օրերն են՝

Հունվարի 1,2,3,4,5,6,8 - ամանորյա արձակուրդներ

Հունվարի 7 - Սուրբ ծնունդ

Փետրվարի 23 -Հայրենիքի պաշտպանի օր

Մարտի 8 -Կանանց միջազգային օր

Մայիսի 1 -Գարնան և աշխատանքի տոն

Մայիսի 9- Հաղթանակի օր

Մայիսի 12 -Ռուսաստանի օր

Նոյեմբերի 4 -Ժողովրդական միասնության օր

Պետական տոնի նախօրեին Ձեր աշխատանքային օրը կրճատվում է 1 ժամով:

Ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ եթե Դուք աշխատանքային պայմանագրի համաձայն աշխատում եք երկուշաբթիից ուրբաթ, իսկ տոնական օրը համընկնում է շաբաթ կամ կիրակի օրվա հետ, ապա այն տեղափոխվում է հանգստյան օրվան հաջորդող աշխատանքային օր, այսինքն, Դուք աշխատանքի պետք է դուրս գաք երկուշաբթի:

ԱՐՁԱԿՈՒՐԴ

Եթե Դուք աշխատում եք **աշխատանքային պայմանագրով**, ուրեմն Ձեզ հասնում է **ամենամյա վճարովի արձակուրդ՝** ոչ պակաս քան 28 օր մեկ տարվա աշխատանքի համար, նույնիսկ եթե Դուք ձևակերպված եք կես դրույքով կամ դրանից էլ քիչ: Եթե Դուք չեք ձևակերպել արձակուրդ (օրինակ՝ Դուք ազատվել եք աշխատանքից, տեղափոխվել եք այլ աշխատանքի, կամ էլ մեկնել եք), ապա Ձեզ պարտավոր են վճարել փոխհատուցում:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Եթե Դուք ունեք հաշվառում և բժշկական ապահովագրություն (այդ մասին մանրամասն «Բժշկական օգնություն» գրքույքում), ապա դիմելով բժշկական հաստատություն՝ Դուք կարող եք ձևակերպել հիվանդության թերթիկ կամ ստանալ ժամանակավոր անաշխանատունակության մասին տեղեկանք: Հիվանդության ժամանակահատվածի վճարը կարող եք ստանալ, եթե աշխատանքային պայմանագրով անցել եք աշխատանքի հիվանդանալուց 6 ամիս առաջ. այսինքն, եթե գործատուն նվազագույնը կես տարի սոցիալական ապահովագրության ֆոնդին կատարել է համապատասխան վճարում: Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Հայաստանի քաղաքացիները կարող են ակնկալել վճարում անկախ այն հանգամանքից, թե ինչքան ժամանակ են աշխատել աշխատանքային պայմանագրով: Սակայն, եթե մինչ այդ Դուք Ռուսաստանում երբևէ չեք աշխատել աշխատանքային պայմանագրով, ապա հիվանդության թերթիկով վճարը կլինի չնչին: Միայն աշխատանքային պայմանագրով 2 տարի աշխատելուց հետո, և, հետևաբար, գործատուի կողմից վճարների կատարման դեպքում Դուք կարող եք ակնկալել հիվանդության թերթիկով Ձեր աշխատավարձին մոտ վճարում:

2015 թվականից աշխատանքային պայմանագրով աշխատող Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Հայաստանի քաղաքացիները կարող են ոչ միայն ստանալ հիվանդության թերթիկով վճարում, այլ հղիության և ծննդաբերության նպաստ, երեխայի ծնվելուց միանվագ նպաստ, երեխայի խնամքի համար նպաստ և այլն:

Եթե Դուք աշխատում եք քաղաքացիաիրավական պայմանագրով, այդ դեպքում Ձեզ ոչ մի վճարում չի ենթադրվում:

ԿԱՐԵՎՈՐ Է. Սպորտային, կուլտուրական և զանգվածային այլ միջոցառումների ժամանակ դրանց անցկացման համար օգնում են կամավորական թմերը, այսինքն՝ կամավոր անվճար օգնականները: Եղե՛ք ուշադիր: Ճշտեք, որպեսզի Ձեր աշխատանքային պայմանագրում գրված չլինի, որ Դուք աշխատանքի եք ընդունվում որպես կամավոր, քանի որ սա նշանակում է որ Դուք կամավոր համաձայնություն եք տալիս աշխատելու առանց վարձատրման (փաստորեն կացարանի և սննդի համ

Զգուշացեք նրանցից, ովքեր կարող են չարաշահել օրենքը:

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.

ԱՅՍՊԻՍՈՎ

- *Աշխատավայրում Դուք ունեք ճիշտ այն իրավունքները, որոնք ունեն ռուսաստանցի աշխատողները:*
- *Ձեր աշխատանքային իրավունքները կախված չեն քաղաքացիությունից, գրանցման առկայությունից, արտոնագրից և այլ փաստաթղթերից: Սակայն հիշեք, որ Ձեզ կարող են աշխատանքից ազատել, եթե պարզվի, որ արտոնագիրը ժամկետանց է, կամ վերջացել է բժշկության ապահովագրության վկայականը:*
- *Ոչ ոք իրավունք չունի Ձեզ հարկադրել աշխատանքի:*
- *Ձեզ պարտավորեն ժամանակին վճարել աշխատավարձը (ամիսը երկու անգամ, այսինքն ամեն երկու շաբաթը մեկ) և ամբողջությամբ:*
- *Ռուսաստանում գործատուներին արգելված է տուգանել աշխատակիցներն:*

ԱՅՍՊԻՍՈՎ

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.

- *Գործատուն պարտավոր է ապահովել աշխատավայրում Ձեր անվտանգությունը, Ձեզ հատկացնել պաշտպանիչ միջոցներ, անցկացնի հրահանգավորում և ուսուցում:*

- *Ոչ ոք իրավունք չունի Ձեզ ստիպել աշխատելու արտաժամյա կամ հանգստյան օրերին:*

- *Եթե Դուք համաձայն եք այդպիսի աշխատանքին, ուրեմն դրա համար Ձեզ հասնում է կրկնակի վճար, կամ էլ վճարովի արտարձակուրդ:*

- *Պետական տոների կապակցությամբ Ձեզ հասնում են լրացուցիչ հանգստյան օրեր և նախօրեին կրճատ աշխատանքային օր:*

- *Օտարերկրյա աշխատողները աշխատանքային պայմանագրով աշխատելու դեպքում կարող են հիվանդության թերթիկով վճարը ստանալ վեց ամիս աշխատելուց հետո (Բելառուսի, Ղազախստանի, Ղրղստանի և Հայաստանի քաղաքացիները՝ աշխատանքի առաջին օրվանից): Բայց հիվանդության թերթիկը, ամեն դեպքում, հարկավոր է, որպեսզի ապացուցվի, որ Դուք գործը չեք լքել , այլ հիվանդ եք եղել:*

1000
СПАСИБ
ЗА ПОМ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

Վաղ թե շուտ ամեն ոք էլ աշխատավայրում բախվում է խնդիրների կամ անարդարությունների հետ: Դա կարող է լինել ցածր աշխատավարձը, աշխատանքի վտանգավոր պայմանները և ղեկավարների կողմից նվաստացումը, օրինական տարաբնույթ փոխհատուցումների և նպաստների չվճարումը, արտաժամյա աշխատանքի հարկադրումը, անհարմար ժամանակացույցը, տուգանքները և շատ ու շատ այլ բաներ:

Իրականությունը ցույց է տալիս, որ օտարերկրյա աշխատողները առավել հաճախ բախվում են աշխատավարձի չվճարման հետ: Չէ՞ որ հենց աշխատավարձի համար են մարդիկ դուրս գալիս իրենց հայրենի վայրերից, ձգտում են Ռուսաստանում փաստաթղթեր ստանալ, ապրում են օտար երկրում՝ հարազատներից հեռու:

Ի՞նչ անել:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՑՈՒՅՈՒՄԸ

Որպեսզի պաշտպանեք Ձեր իրավունքը, Ձեզ հարկավոր է **ապացուցել, որ Դուք աշխատել եք հենց այդ գործատուի մոտ:**

ԻՆՉՊԵՍ ԱՊԱՑՈՒՑԵԼ, ՈՐ ԴՈՒՔ ԻՐՈՔ ԱՇԽԱՏԵԼ ԵՔ

Գործատուի հետ պայմանագիրը կարևոր, բայց ոչ միակ միջոցն է, որպեսզի ապացուցեք , որ Դուք աշխատում կամ աշխատել եք այդ ձեռնարկությունում:

Պայմանագրից բացի **Ձեզ մոտ անպայման պահեք** օրինակ, ստորագրված հանձնարարականներ կամ աշխատավայրից այլ փաստաթղթեր, վճարման տեղեկագրեր, իսկ եթե Ձեր ձեռնարկությունում գործում է անցագրային համակարգ, ապա պահեք անցագրերը, **հեռախոսով կատարեք աշխատավայրի տեսա կամ լուսանկարահանում:** Եթե Դուք համոզված եք, որ գործատուն սխալ է, ապա կարող եք հեռախոսով կամ դիկտոֆոնով ձայնագրել Ձեր խոսակցությունը նրա հետ: Միաժամանակ հիշեք, որ ձայնագրություններն ու լուսանկարները՝ որպես ապացույց, դժվարությամբ են ընդունվում դատարանների կողմից: Դրա համար էլ ավելի լավ է ձեռքի տակ ունենալ ճիշտ լրացված թղթային փաստաթղթեր:

Պետք է հասկանալ, մինչ մենք քթի տակ փնթփնթալով, լուռ հանդուրժում ենք, ամեն ինչ մնում է նախկինի պես:

Գործատուի հետ հարաբերություններում իրենց հետաքրքրությունների պաշտպանումն աշխատողները կարող են անել միայն կոլեկտիվ կերպով, այսինքն՝ համախմբվելով:

Գործատուի և աշխատողների հետաքրքրությունները երբեք ամբողջովին չեն համապատասխանի: Գործատուն միշտ ձգտելու է աշխատողներից որքան հնարավոր է շատ ստանալ, ընդ որում ցածր աշխատավարձի կամ աշխատողների քանակի կրճատման հաշվին: Գործատուն միշտ առավելություն ունի աշխատողների նկատմամբ՝ փող, իշխանություն ձեռնարկությունում ենթակաների, ճակատագրերի կանխորոշման հնարավորություն:

Աշխատողը կախվածության մեջ է գործատուից: Անիմաստ է դրա մասին վիճելը:

Սակայն **գործատուն ավելի շատ կախում ունի աշխատողներից:** Ընկերությունները հետաքրքրված են շահույթ ստանալով, իսկ դա հնարավոր չէ առանց աշխատանքի: Եթե ոչ ոք չաշխատի արտադրությունում, շինարարությունում, դրամարկղում, տաքսիում, սրճարանում կամ էլ բնակարանային գրասենյակում: Եթե Ձեր գործատուն մասնավոր անձ է, նա առավել ևս Ձեզ վստահում է ամենաթանկը, որն ինքը ունի՝ բնակարանը, երեխաներին, հարազատներին, որոնց Դուք խնամում եք:

Դրա համար էլ **աշխատողները իրավացիորեն կարող են պահանջել հարգալից վերաբերմունք իրենց նկատմամբ**, իրենց իրավունքների պահպանում, իրենց աշխատանքի արժանի , արդար և ժամանակին վճարում:

Դրա համար աշխատակիցների հետ պետք է խոսեք Ձեր խնդիրների մասին, գործեք միասին և չհանձնվեք: **Անկախ քաղաքացիությունից Ռուսաստանում միավորվելու իրավունք ունեն բոլոր աշխատողները:** Սա երաշխավորված է Սահմանադրությամբ, Աշխատանքային օրենսգրքով, և «Արհմիությունների մասին» օրենքով: Միաժամանակ Ռուսաստանում բոլոր աշխատողներին երաշխավորված է կոլեկտիվ կերպով բանակցություն վարել գործատուի հետ, այսինքն, ոչ թե «մեն մենակ», այլ բոլորով՝ իրենց ներկայացուցչի հետ միասին: Աշխատողներն իրավունք ունեն իրենք որոշելու, թե որ ձևով միավորվեն: Աշխատողների միավորման ամենատարածված ձևը արհմիություններն են:

Իհարկե, կլինի նաև օգնության կարիք: Ռուսաստանում կան կազմակերպություններ, որոնք զբաղվում են **օտարերկրյա աշխատողների իրավունքների պաշտպանությամբ:**

Դա կարող է լինել իրավաբանական խորհրդատվությունը, պայմանագրի ձևակերպման օգնությունը կամ կապը գործատուի հետ: Միշտ էլ լավ է, երբ ինչ-որ մեկը կարող է հանդես գալ Ձեր անունից, երբ Դուք միայնակ չեք:

Սրանից բացի, արհմիաթենական կազմակերպությունները մշակել են ձեռնարկություններում չվճարված աշխատավարձերի վերադարձման մեխանիզմ: Բայց դրա համար հարկավոր են բոլոր տուժած աշխատողների համատեղ գործողությունները: Օրինակ, միայն 2013 թ. Սանկտ –Պետերբուրգի բնակարանային կոմունալ տնտեսություններում «Նովոպրոֆ» արհմիությանը հաջողվել է հասնել բնակարանների և այլ աշխատողների չվճարված պարտքերի մարմանը, որը կազմել է ավելի քան 3 մլն ռուբլի: 2017 թ. Մոսկվայում «Աբառռո» ռեստորանը, միավորվելով «Նովոպրոֆ» արհմիության հետ, կարողացել են հասնել մի քանի ամսվա չվճարված աշխատավարձերի մարմանը: Ի դեպ, գումարը վերադարձրել են միայն արհմիության անդամներին:

Իսկական արհմիությունն առաջին հերթին նրա անդամներն են: Եթե արհմիությունը բազմանդամ է, եթե նրա բոլոր անդամները համախմբված են, սատարում են մեկմեկու, կարողանում են ծրագրավորել իրենց համատեղ գործողությունները և բանակցել ղեկավարության հետ, ապա կարելի կլինի հասնել տարաբնույթ հարցերի լուծմանը: Ռուսաստանյան արհմիությունները բաց են օտարերկրյա աշխատողների ընդունման հարցում:

Եթե ֆիրմայում կամ շրջանում, որտեղ Դուք աշխատում եք, կա արհմիություն, ապա կարող եք անդամակցել նրան: Դրա համար հարկավոր է **դիմում գրել, արհմիութենական անդամավճար մուծել** (սովորաբար աշխարավարձի 1% -ի չափով): Արհմիություններում կան արհեստավարժ աշխատակիցներ, ովքեր կարող են Ձեզ խորհուրդներ տալ բոլոր այն հարցերի շուրջ, որոնք կապված են Ձեր աշխատանքի և իրավունքների հետ: Եթե Ձեր ձեռնարկությունում չկա արհմիութենական սկզբնական կազմակերպություն, ապա Դուք կարող եք այն ստեղծել:

Ավելին իմանալու համար դիմեք «Նովոպրոֆ» արհմիությանն այն հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստով, որոնք Դուք կգտնեք այս գրքույկի վերջում:

ՈՒՐԻՇ Ո՞ՒՐ ԿԱՐԵԼԻ Է ԴԻՄԵԼ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռուսաստանում գործում են հատուկ պետական մարմիններ, որոնք զբաղված են մարդու իրավունքների պաշտպանությամբ: Դրանք են Աշխատանքի տեսչությունը (Роструд) և դատախազությունը: Աշխատավայրում Ձեր իրավունքների խախտման դեպքում կարելի է թեժ գծով դիմել Աշխատանքի տեսչություն (Роструд) 8 (495) 343 96 61 կամ 8(800) 707 88 41 հեռախոսահամարներով, http/ онлайн – инспекция.рф էլ. փոստով կամ էլ Աշխատանքի տեսչություն (Роструд) տարածքային մարմիններին, որոնց ցուցակները կարող եք գտնել http/www.rostrud.ru կայքում որտեղ ներքևում տեղադրված է ինտերակտիվ քարտեզ և որոնման տող:

Ցանկացած իրավունքի խախտման դեպքում դիմեք դատախազություն: Ձեր տարածաշրջանի դատախազության հասցեն կարելի է իմանալ http/www genproc.gov.ru կայքի «կոնտակտային տեղեկատվության» բաժնում:

ԱՅՍՊԻՍՈՎ

ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- *Որպեսզի պաշտպանեք Ձեր իրավունքները, օրինակ աշխատավարձի չվճարման դեպքում, Դուք պետք է ապացուցեք, որ աշխատել եք: Դա կարելի է անել աշխատանքային պայմանագրի և այլ ապացույցների օգնությամբ: Ապահովագրվե՛ք և այն հավաքագրեք դրանք նախօրոք:*

- *Աշխատանքային իրավունքների պաշտպանության լավագույն ձևը արհմիություններին անդամակցելն է: Այն կտա անհրաժեշտ խորհրդատվություն, կօժանդակի և կկարողանա ճնշում գործադրել գործատուի նկատմամբ, անցկացնել բնակցություններ և հասնել Ձեզ չվճարվածգումարների վերադարձման ու այլ իրավունքների վերականգմանը:*

- *Իրավունքների պաշտպանության համար կարելի է նաև դիմել իրավապաշտպաններին: Նրանք կարող են բողոք գրել, փաստաթղթեր ձևակերպել, հայց ներկայացնել դատարան , ներկայացնել ձեր հետաքրքրությունները և կարող են տրամադրել հումանիտար օգնություն:*

- *Իրավապաշտպանների և արհմիությունների հեռախոսահամարները Դուք կարող եք գտնել գրքույկի վերջում:*

- *Ռուսաստանում գործում են իրավունքների պաշտպանության պետական հատուկ մարմիններ՝ աշխատանքային տեսչություն և դատախազություն:*

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանում որտեղ էլ որ գտնվեք **Դուք իրավունք ունեք բժշկական շտապ օգնության անվճար սպասարկման:** Դա նշանակում է, եթե Ձեր կյանքին վտանգ է սպառնում կամ էլ ունեք սուր ցավերի նոպա, ապա **շտապ օգնության բժիշկները պարտավոր են այցելել Ձեզ**, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն, հանել սուր ցավը կամ տեղափոխել հիվանդանոց, որպեսզի փրկեն Ձեր կյանքը:

ԿԱՐԵՎՈՐ Է. **Բոլոր հեռախոսներով, ներառյալ բջջայինով, բժշկական շտապ օգնության հեռախոսահամարն է 103**: Կարող եք օգտվել նաև անհետաձգելի ծառայության 112 հեռախոսահամարով:

ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՈՒՐԴ. «ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԿԱՆՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՂԵՔ ՕՊԵՐԱՏՈՐԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ.

- **սեռը,**
- **տուժողի մոտավոր տարիքը(այն անձի, որը վատացել է),**
- **արդյոք շնչում է նա, գիտակցությունը տեղն է և կանչի պատճառը,**
- **ստույգ հասցեն,**
- **Ձեր անունը,**
- **հեռախոսի համարը:**

Խորհուրդ Ճիշտ հասցեն, ուր կանչում եք շտապ օգնությունը, կարելի է նայել Ձեր բջջային հեռախոսի «Ուղեցույց» («Навигатор») կամ էլ «քարտեզներ» («Карты») հավելվածներում:

Սակայն ի նկատի ունեցեք, որ հետագա բժշկական բոլոր օգնությունների համար պետք է ինքներդ վճարեք և այն էժան չէ: Միայն Բելառուսի քաղաքացիներն ունեն իրավունք օգտվելու մեծ ծավալի անվճար բժշկական օգնությունից:

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այդ իսկ պատճառով կարևոր է ունենալ բժշկական կամավոր ապահովագրական պոլիս (այսուհետև ԿԲԱ պոլիս («полис ДМС»): Այն կարելի է գնել Ռուսաստանում, որտեղ բազմաթիվ ապահովագրական ընկերություններն առաջարկում են ապահովագրական տարբեր ձևեր: Ապահովագրության ձևակերպման համար անհրաժեշտ կլինի Ձեր աննձնագիրը:

Մինչ ապահովագրություն գնելն անպայմանորեն կարդացեք պայմանագիրը: Այնտեղ պետք է նշված լինի օգնության այն տեսակները, որոնք կցուցաբերեն հենց այս ապահովագրական պայմանագրով: Ապահովագրության գինը կախված է պայմանագրում նշված օգնության տեսակների թվարկումից: Սովորաբար ինչքան բարձր է գումարի չափը, այնքան շատ ծառայություններից Դուք կարող եք օգտվել: Անպայման իմացեք այն բժշկական կենտրոնների և պոլիկլինիկաների հասցեները, որտեղ Դուք կարող եք դիմել, նրանց աշխատանքային ժամերը ու հեռախոսների համարները և, արդյո՞ք, ընդունում են օտարերկրյա քաղաքացիներին:

ԿԱՐԵՎՈՐ Է. Եթե Ձեզ առաջարկում են տարեկան 10-15 հազար ռուբլուց ցածր արժեք ունեցող ապահովագիր (պոլիս), ամենայն հավանականությամբ, այն իր մեջ ընդգրկում է ծառայությունների նվազագույն սպասարկում, այդ թվում, նաև անհետաձգելի օգնություն, որը Ձեզ առանց այդ էլ պարտավորեն ցուցաբերել:

ԿԱՐԵՎՈՐ Է. Գնելով ապահովագրական վկայականը՝ հիշեք. այն վավեր է միայն Ձեր համար և չի տարածվում Ձեր ընտանիքի անդամների վրա (երեխաներ, ամուսիններ, ծնողներ):

Երբեմն գործատուներն իրենց աշխատողների համար իրենք են ձևակերպում ԿԲԱ պոլիսը: Աշխատանքի ընդունվելիս այդ մասին հարցրեք գործատուին: Եթե նա ձևակերպում է ԿԲԱ պոլիս, ճշտեք նրանից, թե ինչ բժշկական օգնության հույս կարող եք ունենալ և որտեղ այն կարող եք ստանալ, քանի որ ոչ բոլոր պոլիկլինիկաներն են սպասարկում օտարերկրյա քաղաքացիներին, եթե նույնիսկ նրանք Ձեր ձեռնարկության հետ ունեն աշխատակիցներին բուժելու մասին պայմանագիր:

ՎՃԱՐՈՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Եթե Դուք գնել եք ծառայությունների նվազագույն փաթեթ, ապա հարկավոր է նախօրոք գտնել Ձեր աշխատավայրին մոտ պոլիկլինիկա կամ բժշկական կենտրոն և ճշտել, թե ինչ վճարովի ծառայություններ են մատուցում օտարերկրյա քաղաքացիներին և ինչ գնով: Եթե Ձեզ շտապ պետք լինի բժշկի խորհրդատվություն, իսկ Ձեր ապահովագիրը չի ենթադրում այդպիսի ծառայությունների վճարում, ապա Դուք ինքներդ կարող եք վճարել խորհրդատվության, զննումների և բուժման համար:



ԱՅՍՊԻՍՈՎ

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- *Դուք ունեք բժշկական անհետաձգելի օգնության իրավունք:*
- *Մյուս բժշկական ծառայությունների համար Դուք ինքներդ պետք է վճարեք և դրանք էժան չեն:*
- *Դուք կարող եք գնել կամավոր բժշկական ապահովագրության պոլիս և այդ դեպքում Ձեր բժշկական ծախսերը կկատարվի ապահովագրության ընկերության կողմից:*
- *Անպայման ձեռք բերեք երեխաների բժշկական ապահովագիր:*
- *Ձեռք բերելով ապահովագիր՝ ուշադիր կարդացեք պայմանները, որպեսզի իմանաք թե որ բուժումներն են դրանով վճարվելու: Հարկ չկա գնել այն բժշկական պոլիսները, որոնք նախատեսում են միայն անհետաձգելի բժշկական օգնություն, քանի որ այն Ձեզ առանց այդ էլ պետք է անվճար ցուցաբերեն:*
- *Ճշտե՛ք, թե արդյոք Ձեր գործատուն աշխատակիցների համար ձևակերպում է բժշկական ապահովագրություն:*

ԵԹԵ ՄՆԱՑԵԼ ԵՔ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Եթե Ռուսասատանի տարածք մուտք գործելուց 90 օրվա ընթացքում չեք կարողացել աշխատանքի ընդունվել, ապա անհրաժեշտ է, որ մեկնեք երկրից:

Ինչպես Ռուսաստանի քաղաքացիներն այնպես էլ Դուք իրավունք ունեք դիմելու բնակչության զբաղվածության պետական կենտրոններ: Դրանք կարող են լինել քաղաքային, ինչպես նաև օկրուգային և շրջանային մեծ քաղաքներում: Ձեզ չեն կարող գործազուրկ ճանաչել և դրա համար նպաստ վճարել, սակայն եղած թափուր տեղերի մասին տեղեկատվությունը նրանք պարտավոր են Ձեզ անվճար տրամադրել:

Եղե՛ք աչալուրջ

Եթե ունեք ոչ բարձր որոկավորում, աշխատանքի քիչ փորձ, առաջին անգամ եք Ռուսաստանում և Ձեզ առաջարկում են բարձր վարձատրվող աշխատավարձ, սնունդով, հանրակացարանով, բայց չեն ցանկանում ձևակերպել աշխատանքային պայմանագիր, չեն ասում ձեռնարկության անվանումը, տնօրենի տվյալները, ապա **մեծ է հավանականությունը, որ Դուք կապվել եք այն անձանց հետ, որոնք զբաղված են մարդկանց առևտրով: Դուք կարող եք ստրկության մատնվել:** Եղե՛ք զգույշ:



ԱՅՍՊԻՍՈՎ

ԵԹԵ ԴՈՒՔ ՄՆԱՑԵԼ ԵՔ ԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ

- *Եթե առանց աշխատանքի մնացել եք 90 օրից ավել, ապա պետք է լքեք Ռուսաստան տարածքը: Նորից կարող եք վերադառնալ միայն 90 օր հետո:*
- *Թափուր տեղերի համար կարող եք դիմել բնակրության զբաղվածության պետական կենտրոններ:*
- *Եղե՛ք զգույշ: Եթե Ձեզ առաջարկում են բավականին լավ պայմաններ, ուրեմն մեծ է հավանականությունը, որ դա ստրկավաճառի խայթ է և Ձեզ ցանկանում են գցել ծուղակը:*

ԵԹԵ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՁԵԶ ՀԵՏ ԳԱԼԻՍ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Եթե Ձեր երեխաների հետ պատրաստվում եք աշխատանքի փնտրման մեկնել Ռուսաստան, ապա ուշադրություն դարձրեք, որ 2013 թ. հուլիսից մինչև 18 տարեկան երեխաներին արտոնագիր չի տրվում: Սա նշանակում է, որ մինչև 18 տարեկան պաշտոնապես չի կարելի տեղավորվել աշխատանքի:

Երեխաների աշխատանքը Ռուսաստանում արգելված է:

Եթե Ձեր երեխաները հայրենիքում չեն ավարտել դպրոցը, ապա Դուք պարտավոր եք նրանց տեղափոխել դպրոց Ռուսաստանում, որտեղ ուսուցումը անվճար է: Ուշադրություն դարձրեք , որ որոշ սուբյեկտներում դպրոցների ընդունելության գրանցումը էլեկտրոնային է և սովորաբար արվում է նախօրոք: Տեղեկատվության համար Դուք կարող եք դիմել նաև ՀԾՄԿ (ՄՓԿ), որոնք իրականացնում են պետական ծառայություններ (դրանք այն կենտրոններն են, որտեղ Դուք կարող եք ձևակերպել գրանցումը): Չնայած ըստ օրենքի երեխային դպրոց ընդունելիս իրավունք չունեն բացի Ձեր անձնագրից այլ լրացուցիչ փաստաթղթեր պահանջել, դպրոցները բոլորից հաճախ պահանջում են ցույց տալ Ձեր և երեխայի գրանցումն ու երեխայի առողջության մասին տեղեկանքը: Կարող է հարկ լինել նաև այլ փաստաթղթեր և դրանց ռուսերեն թարգմանությունները:



ԽՈՐՀՈՒՐԴ

Եթե Դուք չեք ցանկանում և չեք կարողանում ներկայացնել այդ փաստաթղթերը, ապա հղում արեք **ՌԴ Կրթության և գիտության նախարարության 28.06..22012թ. ИР—535/03 «Հանրակրթական դպրոցների ընդունման կարգի մասին» նամակին:** Այդ փաստաթուղթը հռչակում է Ձեր երեխաների սովորելու իրավունքը: Նամակը կարելի է գտնել համացանցում: Դպրոցի համար երեխայի բժշկական տեղեկանքը ստանալու համար պետք է երեխայի համար կա՛մ գնեք բժշկական ապահովագրություն, կա՛մ էլ դիմել այն պոլիկլինիկա, որն օտարերկրացիներին առաջարկում է վճարովի բժշկական օգնություն; Ապահովագրության տեսակները շատ են և որպեսզի իմանաք, թե դրանցից որն է Ձեզ հարմար, անմիջապես դիմեք ապահովագրական գործակալությանը կամ էլ հարցրեք ցանկացած բժշկական կենտրոնում:

ԿԱՐԵՎՈՐ Է. Դուք կարող եք հիվանդ լինեք կամ էլ աչք փակել Ձեր հիվանդության վրա: Դուք հասուն մարդ եք, իսկ երեխաներին բժշկական ապահովագրությունը անպայմանորեն անհրաժեշտ է: Պարզեք՝ արդյոք ապահովագրական գործակալությունն տալիս է պոլիս երեխաներին և ինչ պայմաններով:

ԱՅՍՊԻՍՈՎ

ԵԹԵ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՁԵԶ ՀԵՏ ԳԱԼԻՍ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ

- *Հիշեք, որ երեխաների աշխատանքը Ռուսաստանում արգելված է: Մինչև 18 տարեկան դառնալը Ձեր երեխան չի կարող արտոնագիր ստանալ:*
- *Յուրաքանչյուր երեխա անկախ քաղաքացիությունից, փասթաթղթերի առկայությունից իրավունք ունի դպրոց հաճախելու, որտեղ սովորելը անվճար է:*
- *Մի՛ զրկեք Ձեր երեխաներին ապագայից և մի ստիպեք նրանց անօրինական աշխատել: Պարտադիր կերպով ուղարկեք նրանց դպրոց սովորելու:*

ՇՓՈՒՄՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԱՇԽԱՏԱԿՑՆԵՐԻ ՀԵՏ

Ռուսաստանում գտնվելու և աշխատելու ժամանակ տհաճ պահերից մեկը կարող է լինել շփումն իրավապահ մարմինների աշխատակիցների հետ:

Իմացե՛ք Ձեր իրավունքները

Եթե Ձեզ կանգնացրել է ոստիկանության կամ էլ ՆԳՆ աշխատակիցը և խնդրել է ցույց տալ անձը հաստատող փաստաթղթերը, հիշեք, դրա համար այդ աշխատակիցը պետք է լինի համազգեստով, պարտավոր է Ձեզ ներկայացնել իր փաստաթղթերը (նկարով վկայականը, որտեղ նշված են նրա ազգանունն ու կոչումը), ինչպես նաև Ձեզ բացատրի փաստաթղթերի ստուգման պատճառը: Եթե նա հրաժարվում է ցույց տալ իր վկայականը, Դուք պարտավոր չեք նրան ինչ-որ բան ներկայացնել և կարող եք անմիջապես ոստիկանություն զանգահարել 102 հեռախոսահամարով: Այս դեպքում օրենքի խախտողը նա է:

Եթե անձնագիրը Ձեր հետ չի, Դուք կարող եք ցույց տալ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որտեղ առկա է Ձեր նկարը և ազգանունը: Դա կարող է լինել անցագիր, վարորդական իրավունքի վկայական, թարգմանությամբ հաստատված անձնագրի պատճե:

Եթե Ձեզ հետ ոչ մի փաստաթուղթ չկա և **Ձեզ կանգնացրել են, ապա կարող եք Ձեր ծանոթներից մեկին զանգահարել, որպեսզի նրանք բերեն Ձեր անձնագիրը:**

Եթե Ձեզ փաստաթղթերի հետ դրված է փող, ապա ոստիկանության աշխատակցին ներկայացնելուց առաջ պետք է դրանք հանել, քանի որ այն կընկալվի որպես կաշառքի առաջարկ և այդ դեպքում կաշառք տալու փորձի համար ողջ պատասխանատվությունն ընկնում է Ձեր վրա:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ոստիկանության աշխատակիցը պետք է հարգալից լինի Ձեր նկատմամբ, սակայն Դուք ևս հարգալից ու քաղաքավարի կերպով նրանից հարցրեք Ձեզ հետաքրքրող տեղեկատվությունը:

Հաշվառում կարող է պահանջել միայն ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) աշխատակիցը: Սակայն որոշ դեպքերում ոստիկանության աշխատողներն էլ են խնդրում ցույց տալ այդ փաստաթուղթը: Եթե դեռևս չեք գրանցվել, ապա կարող եք ցույց տալ միգրացիոն քարտը, որտեղ նշված է Ռուսաստան մուտք գործելու օրը, կամ էլ ցույց տալ տոմսը, որով ժամանել եք:

ԵՂԵ՛Ք ՀԳՈՒՅՇ

Սարսափելի է, բայց կարող եք բախվել ոստիկանության աշխատակցի կողմից օրենքի խախտման դեպքի հետ: Այս կամ նմանատիպ դեպքերի ժամանակ ձեռքի տակ բջջային հեռախոսում կամ առանձին թղթի վրա ունեցեք հրատապ օգնության հեռախոսահամարները:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ

112- արտակարգ ծառայությունների կանչ (շուրջօրյա)

101- հրշեջ ծառայության կանչ (շուրջօրյա)

102- ոստիկանության կանչ (ինչպես նաև ոստիկանության աշխատակցի կողմից անօրինական գործողության դեմ բողոքի համար, շուրջօրյա)

103- բժշկական շտապ օգնության կանչ (շուրջօրյա)



ԿԱՐԵՎՈՐ Է. Խնդրում ենք հիշել, որ համարյա ցանկացած օրենքի խախտման դեպքում օտարերկրացիները կարող են ոչ միայն տուգանվել, այլ վտարվել երկրից՝ 10 տարի Ռուսաստան մուտք չգործելու իրավունքով: Եղեք ուշադիր: Արտակարգ դեպքերի ժամանակ զանգահարեք վերոնշված կամ գրքույկի վերջում տեղադրված հեռախոսահամարներով:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ցավոք սրտի, նույնիսկ հաշվառումն ճիշտ լրացրած լինելու դեպքում էլ ոստիկանության կամ ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД) աշխատակիցները, Ռուսաստանում ստուգելով Ձեր փասթաթղթերը, կարող են հաստատել, որ փասթաթղթերը կեղծ են և սպառնալ տուգանքով և երկրից արտաքսելով:

Հաճախ հարցի կարգավորման համար կաշառք են պահանջում: **Հիշեք, եթե Դուք կաշառք եք տալիս , ապա Դուք** և**ս հանցանք եք գործում:** Եղե՛ք ուշադիր:

ԿԱՐԵՎՈՐ Է. Ո՛չ ոստիկանության, ո՛չ էլ միգրացիոն ժառայության աշխատակիցներն իրավունք չունեն վերցնել Ձեր անձնագիրը:



Մուտքի արգելք

Ցանկացած արտասահմանցու, ով երեք տարվա ընթացքում կատարել է երկու և ավել վարչական խախատում, կորող են արգելել մուտքը Ռուսաստան: Դա նշանակում է , եթե Ձեզ տուգանել են թեկուզ մեկ անգամ, ապա հաջորդ տուգանքի նշանակումը կարող է հանգեցնել նրան, որ Ռուսաստանից դուրս գալուց հետո Դուք մի քանի տարի այնտեղ վերադառնալու իրավունք չեք ունենա: Տուգանքը կարող է գրվել, օրինակ, այն բանի համար, որ Ռուսաստան մուտք գործելուց 30 օրվա ընթացքում չեք հասցրել արտոնագիր ստանալու նպատակով հանձնել փասթաթղթերի փաթեթը, երթևեկել եք առանց տոմսի, փողոցն անցել եք ոչ թույլատրված հատվածով, ոչ ճիշտ եք կայանել ավտոմեքենան, հասարակական վայրում օգտագործել եք խմիչք կամ էլ լինելով պաշտոնատար անձ՝ Ձեր կողմից խախտվել է օրենքը և այլն:

Հիշե՛ք. եթե Դուք արդեն գտնվում եք Ռուսաստանում և մտցված եք երկիր մուտք չգործող անձանց տվյալների շտեմարան, ապա Ձեզ կմերժեն արտոնագրի տալն ու վերաձևակերպումը:

Եթե Ռուսաստան մուտք գործելուց 30 օրվա ընթացքում չեք հասցրել հավաստագրի համար հավաքել անհրաժեշտ փասթաթղթերը, ապա տուգանքից խուսափելու համար Դուք կարող եք մեկնել այլ երկիր (Բելառուսից բացի, քանի որ այնտեղ Ձեզ չեն տա միգրացիոն քարտ) և նորից վերադառնալ: Այդ ժամանակ Դուք նորից կունենաք 30 օրյա ժամկետ՝ արտոնագիր ստանալու նպատակով փասթաթղթերի ներկայացման համար: Կարևոր է, որ Դուք պահպանեք միգրացիոն օրենսդրությունը. առանց արտոնագրի Ռուսաստանում կարող եք մնալ 180 օրից 90 –ը: Վերադառնալով Ռուսատան՝ Դուք պարտավոր եք ամեն անգամ նորից գրանցում ձևակերպել: Եթե Ձեզ տուգանել են որպես պաշտոնատար անձ (այսինքն աշխատավայրում) և Դուք վստահ եք, որ ոչինչ չեք խախտել, ապա անպայման փորձեք բողոքարկել տուգանքը. օրենքը թույլ է տալիս դա անել 10 օրվա ընթացքում:

ՆԳՆ –ում առկա է Ռուսաստան մուտք գործել արգելված անձանց շտեմարան՝ http://services.fms.gov.ru/info-service.htm?sid=3000. Սակայն այս շտեմարանը լիարժեք չի և հաճախ են սխալներ լինում: Ցավոք դժվար է լինում նաև գտնել, թե որ մարմինն է արգելք դրել մուտքի համար և ուր պետք է դիմել բողոքարկման համար: Բացի այդ, շտեմարանում մտցված տվյալները զուտ տեղեկատվական են: **Յուրաքանչյուր մարդու համար ճիշտ տեղեկատվություն կարելի է ստանալ միայն Ռուսաստանում՝ գրավոր կերպով դիմելով ՆԳՆ ՄՀԳՎ (ГУВМ МВД)** և **այստեղից ստանալով պաշտոնական պատասխանով նամակ:**

Հետադարձ կապ

Հասցե. ք. Մոսկվա, Բոլշայա Տուլսկայա փող., տ. 10, շին. 1, գրասենյակ 132

Էլ. հասցե՝ novoprof@novoprof.net

Հեռախոս՝ +7(977)688-59-57

САЙТ НОВОПРОФ

NOVOPROF.NET

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ПИЩЕВОЙ И ТАБАЧНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ, ТОРГОВЛИ, УСЛУГ И СМЕЖНЫХ ОТРАСЛЕЙ

НОВОПРОФ

Москва

2021